Langasse (Autriche) W. 4. Vienne

Է. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 20 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1904 — ԹԻՎ 663

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար տարեկան 3 տլր.
վեցամսեայ 1 50 »

Թանուցման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեքին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լայ։

—o—

Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ

Նամակ և դրամ ղրկել խմբագրութեանս հասցէին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Yarna (Bulgarie)

Պուլկարիոյ համար ձեռքի 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռքի 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵՏԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ»

ՀԱՅԻ ԲԱՐՔԵՐԻՑ

Այսօր մենք հրատարակում ենք Բաթումի սոցիալիստական կոմիտէի մի թռուցիկը, որով հայ ժողովրդին գուժվում թէ՝ հին հնչակեանները, իրենց մի նախկին ընկերոջը դաշոյնի 22 հարուածով մահացրել են, որովհետև եղբայրասպան կիրքերի զոհ գնացած երիտասարդը «յանդգնութիւնն է ունեցել ուրիշ քաղաքական դաւանանք ունեցող մարմնի յարել։

Այս գազանական վարմունքը գալիս է երկրորդ անգամ փառաբելու թէ՝ հին հնչակեանները եղբայրասպանութեան ոճիրների մէջ իրենց գազանութիւնը գերադրական աստիճանի են հասցրնում դաշոյնով հարուածներ տալով իրենց զոհերին։ Դա ի՞նչ արիւնռուշտ վրէժխնդրութիւն է... Ներոնները անդամ կը կարմրեն. կը նսեմանան այդ տեսակ ոճրագործութիւնների հանդէպ։ Բայց հին հնչակեանները կարմրել, ամաչել չը գիտեն. Նրանք ամենայն պաղարիւնութեամբ իրենց ցուցադրում են իբրեւ անուղղայ ոճրագործներ, հասարակութեան կատարելապէս իրաւունք տալով լինչի օրէնքին դիմելու այդ տեսակ գռեհիկ ոճրագործների հանդէպ։

Այս տխուր դէպքը, որ գալիս է կրկին խարանելու հայ քաղաքական կուսակցութիւնների ճակատը, առիթ է տալ, Բաթումի սոցիալ դէմոկրատներին, աղաղակել «կորչի ազգայնականութիւնը, կեցցէ միջազգային սոցիալ դէմոկրատիան»։ Մի տեսակ Շարլատանութեամբ հասկցնել տալու համար թէ՝ հին հնչակեանները ազգայնական լինելու պատճառով է որ սպանել են սոցիալիստ Աւետիք Թամամեանին։

Շատ ողորմելի տրամաբանութիւն է այդ տրամաբանութիւնը. հին հնչակեանները Թամամեանին սպանել են, որովհետև մարդասպաններ են, և ուրիշ ոչ ինչ։ Մի սովորական ոճրագործ հայ էլ կարող է մի սոցիալ դէմոկրատի սպանել, և ի հարկէ այդ պարագային հայ ազգայնական յեղափոխականները մեղաւոր չեն լինի. այլ ոճրագործական տրամադրութիւններ ունեցող անհատը, կամ կուսակցութիւնը։

* *

Մեր բարքերի տգեղ նմուշներից մէկի արձագանքն էլ Պարիզից է հասնում մեզ։ Կրկին որբերի շահագործման և նրանց հետ տմարդիօրէն վարվելու մանրամասնութիւնների հետ ծանօթացնում է մեզ Պարիզի մեր աշխատակիցը, սպառնալով որ դեռ ուրիշներն էլ պէտք է գրեն այդ կարծես յաւիտենապէս հայ ժողովրդի գլխին կախված որբական խնդիրի մասին։

Այս անգամ որբերին հարստահարող, նրանց շահագործող, նրանց հետ շների պէս վարվողը հանդիսանում է հռչակաւոր ակնավաճառ էգնաեանը՝ թրքական սարայների այդ մանկլաւիկը, որը մի երկու տարի առաջ ազգային մեծ բարերար տիտղոսը ստանալու տենչանքով լի և յուզված որբասէր հանդիսանալով ասպարէզ եկաւ Ժումաեանի ճանկերի մէջ ընկնելու վիճակված խեղճ որբերին պաշտպան հանդիսանալու և հայոց ազգին լաւ, օգտակար անդամներ հասցնելու ըստ երեւոյթին գեղեցիկ դիտաւորութեամբ, ու արժանացաւ կաթողիկոսական կոնդակին, որը շատ անգամ շնորհիւ Հայրիկի անսահման բարեմտութեան, ձօնվում է ամենայետին շարլատանին իսկ, որոնց թագնոցը սրբակը կարող են կազմել սկնապարար էգնաեանները։

Մեր թղթակցի գրածների եթէ ամենաչնչին մասն իսկ ճիշդ ընդունենք, էգնաեանը ներկայանում է մի շարլատան, որի նմանը միայն հարեմի և Պարիզի կոկոտների շրջանը կարող է ստեղծել։

Եւ չենք կարող ճիշտ չընդունել, որովհետեւ այդ խայտառակ խնդրին պատասխան ելք տալու համար գաղափարներով ու ձգտումներով տարբեր և իրարից բոլորովին հեռացած մարդիկ ձեռք ձեռքի են տուել։

Էգնաեանին, իր այդ տմարդի շահագործման մէջ. գործիք և նեցուկ են դարձել Պարիզում, ինչ որ Մոզեան և Բուլղարահայերին ծանօթ հռչակաւոր իդիոտ Տ. Էլմասեան կոչված արարածը։ Էլմասեանի մօտիկութիւնը էգնաեանին՝ արդէն բաւական մեծ դրական է էգնաեանի պէս կեղծ բարեբարեներին և սուտ ազգասէրներին բնորոշելու համար։

Բայց մի բան մեկ զարմացնում է, և շատ։ Պարիզի պէս մի տեղում, ուր կան բաւական թւով հայեր էգնաեանի ինչ տեսակի մարդ լինելը դեռ նոր է երեւան գալիս։

Ինչո՞ւ այդքան ուշ։ Միթէ՞ այդ մարդը այնքան բարդ տիպ էր, որ մինչեւ օրս հասկանալ չէր կարելի։

Վերջապէս, լաւ է ուշ. քան երբէք։ Գոնէ հիմա Պարիզում ապրող հայ երիտասարդութեան վրա պարտականութիւն է ընկնում վերջնապէս որոշելու էգնաեանի տեղը։

ՎԱՐԴՕ

Պրոլետարներ բոլոր երկիրների, միացէք!

ՌՈՒՍԱՍ. ՍՕՑ.-ԴԷՄՕԿՐ. ԲԱՆԻՈՐ.
ԿՈՒՍԱԿ. ԿՈՎԿԱՍ. ՄԻՈՒԹ.

ԸՆԿԵՐՆԵՐ!

Լսեցի՞ք։

Ցերրօր! դաշոյնի հարուած, սպանութիւն!

Եւ այս բոլորը յեղափոխականի գէմ

Եւ ո՞վ գործ գրեց (.°) — «Յեղափոխականը»!

Ո՞վ թեղադրեց (.°) — «Յեղափոխականները»!

Բայց պարզենք հարցը։

Սեպտեմբեր 3-ին դաշոյնի 22 հարուածի զոհ, անմեղ զոհ ընկաւ մեր ընկերներից մի սիրուն հատիկ մի պայծառ դէմք, մի կուռ ոչ թէ ըզգացմունքով, այլ գիտակցութեամբ ...։ Սպանուեց Աւետիք ԹԱՄԱՄԵԱՆԸ!

Շատ ժամանակ չէր անցել այն օրից, երբ Սուետիքը անցել էր բաղտակից բանւորների կուսակցութեան կողմը. բայց կարճ ժամանակում, ընդամենը 6 ամսւայ ընթացքում նա կարողացաւ զանազանել լաւն ու գէշը, չարն ու բարին և սրտով նւիրուեց իր դասակարգի —բանւորական շահերը պաշտպանելու գործին— ընդդէմ բուրժուաների և սրանց պաշտպան միապետութեան։

Բայց առաջ ինչ էր (.°) —նա, «Հնչակեան ազգային-յեղափոխական» նոյնիսկ «սոցիալիստ կուսակցութեան» անդամ էր և ԳՈՐԾՈՂ անդամ! Այն օրից ի վեր, երբ ծանօթացաւ սոցիալ-դէմոկրատական սկզբունքների հետ և ՀԱՄՈԶԻԵՑ, որ ՄԻԱՑՆ սոցիալ-դէմոկրատիան կարող է ազատել ԲՈԼՈՐ ՃՆՇԻԱՑ ՈՒ ՀԱԼԱԾԻԱՑ ՄԱՐԴԿԱՆՑ, մտաւ մեր կուսակցութեան տեղական գունդը և սկսեց գործել։ Իր ընկերներին հասկացնում էր, թէ ինչ է պահանջում և ուր է ձգտում սոցիալ-դէմոկրատիան։ Նա տարածում էր սոցիալիզմի փրկարար գաղափարը։ Եւ ահա այս սուրբ և մեզ, բանւորներիս ամենի սրտին մօտ գաղափարի տարածողը, իր ՆԱԽԿԻՆ «յեղափոխական» ընկերների կողմից իբրեւ պսակ՝ ստացաւ 22 մահացու հարուած։ Հայ «ազգայնականները» Հնչակեան բանակից իրանց ձեռքերը ներկեցին այն մարդու արիւնով, որ հոգով սրտով նւիրուած էր բանւորի շահերի պաշտպանելու գաղափարին և կուռւում էր պրոլետարիատի, այս ճնչուած, բայց հզօր դասակարգի ազատութեան համար!

Գազգային դատավճիռ!

Զգ՝ելի բանական միապետութիւնը կը դողար այսպիսի դատավճիռ տալուց!

Բայց չը սոսկացին «յեղափոխականները»!

Ընկերներ! Ժամանակ է սթափուելու. հերի՛ք է, որքան թմրած գանազան օրօրներ լսելով՝ անզգայ մնացիք։ Վաղո՛ւց, շա՛տ վաղուց կթան կովի նման խաղալիք էք դարձել հատավիզ բուրժուա ինտելլեգենցիայի ձեռքին, այն ինտելլեգենցիայի, որ տարիների ընթացքում բանւոր դասակարգի մէջ ազգայնական խտրութիւն քարոզելով ձեզ իրարից ջլատում է և իրա դիրքը ամուր պահպանում։ Ազգայնական խտրութիւն քարոզում է և ինքը միապետութիւ-

նը, սրա ցանկութիւններից մինն է և այն, որ ջլատէ զանազան ազգերին պատկանող բոլոր բանուորներին և թուլացնէ նրանց։ Եւ ահա բուրժուա ինտելլեգենցիան գիտակցաբար թէ անգիտակցաբար քարոզելով նոյնը —միապետութեան ձեռքին գործիք է դառնում։ Միւս կողմից, պիտի հականաք ընկերներ, որ ազգայնական դիմակի տակ, նրանք հարուստների շահերն են պաշտպանում։

Ուրեմն, ժամանակ է դուրս գալ ձեզ չրջապատող խաւարից, մութից ...։ Ժամանակ է մտնել միջազգային սոցիալ-դէմոկրատական դրօշակի տակ, միակ կուսակցութեան, որ վստահ քայլերով առաջ է գնում ու հարթում ճնշած դասակարգի փշոտ ճանապարհը, այն ճանապարհը, որ խճճած է բուրժուաների և նրանց պաշտպան բռնակալ միապետութեան ցանցերով։

Միանանք ընկերներ առանց խըտրութեան ազգի ու ցեղի և միաբերան գոչենք մեր ահեղ գոչը.

ԿՈՐՉԻ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ!
ԿԵՑՑԷ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՈՑԻԱԼ-ԴԷՄՈԿՐԱՏԻԱՆ!
ԿՈՐՉԻ ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ!
ԿԵՑՑԷ ԴԷՄՈԿՐԱՏԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ!
ԿԵՑՑԷ ՍՈՑԻԱԼԻԶՄԸ!

ԲԱԹՈՒՄԻ ԿՈՄԻՏԷ

Տպարան Բաթումի Կոմիտէի

Հնչակեանները արտասահմանում «Վերաշնութեան» միջոցով աշխատում են կլլեցնել հասարակութեան որ իրենք սոցիալ-դէմոկրատներ են և գործում են այդ հողի վրայ և թէ ամբողջ Կովկասի երիտասարդներին Ռ. Ս. Տ. Բ. կուսակցութեան հետ միասին համակրում են իրենց և մինչեւ իսկ աշխատում են հասկացնել թէ իրենք Հնչակեաններն են Կովկասեան ցոյցի և գործադուլների ղեկավարները։ Իսկ Կովկասում իրենք իրենց հռչակում են թունդ «ազգայիններ» և դրանով միայն կարողանում են մի քանի մարդիկ իրանց գոյութիւնը պահել։

Հնչակեանների և Ռ. Ս. Տ. Բ. կուսակցութեան յարաբերութիւնները և այդ հողի վրայ նրանց դիրը պահելու համար ուղարկում եմ իբրեւ նմոյշ վերջիններիս մի թռուցիկը ամենապերճախօս փաստը Հնչակեան կոչուած մի քանի խմբակների խաբեբայութեան. կարդացողը մի որոշ եզրակացութեան ինքնին կարող է գալ։

Մ.

1904 Հոկտեմբեր 5
Բաթում

ԹԷ Ի՞ՆՉ ԿՈՒԶԷԻ

Գոռ ամպրոպն կրծքիս, չէկ-չանթը ճակտիս.
Կը ցանկայի սե՛ւ, մռայլ ամպ մ'ըլլալ,
Բնութեան մաղձը հաւաքած սրտիս,
Դէպի Բնութեան վայրերը սուրալ։

Խուլ որոտումի ահեղ մռունչով՝
Բողոքներս գոռալ մարդկութեան վրայ,
Ու կայծակներուս հրիզէն չունչով,
Լափել ամէն բան, անգո՛ւթ, անխնա՛յ...

Ա՛լ հանգստացած, յոգնա՛ծ, հեւա՛լով,
Սահիլ մի անկիւն, մոռցա՛ծ անհե՛տ,
Ուր արցունքի տա՛ք-տա՛ք կաթիլներով՝
Կոտգէի լուռ լալ թշուառներու հետ...

Հրանտ

Բարիզ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ամէն անգամ, երբ հարկ եղած է բողոքել անիրաւութեան, վատութեան դէմ, Շարժումն է եղած առաջին անգամ խնդիրը հրապարակի վրայ դրող և Շարժումն է եղած կարգ մը բարդ խնդիրներ ինպատանկարողներուն լուծող։ Ասի գովասանք մը չէ որ կ'ընեմ այլ խղճիս ձայնին կը հետեւիմ։

Ինչպէս միշտ, նոյնպէս և այս անգամ մեծ վստահութիւն ունիմ որ Շարժումը պիտի ըլլայ արդարութեան ձայնին կարապետը։

Խնդիրը որբերու նկատմամբ է, որբե՛ր, —մարտիրոսներու զաւակնե՛ր..., որբե՛ր, — անտէր ու անօգնական որդորմելիներ... որբե՛ր, —անտուն և անպաշտպան տանկներ..., որբե՛ր, —անբարեկամ, անօգնական անթեւ ու անթիկունք դժբաղդներ..., որբե՛ր, որբե՛ր, հա՛յ որբեր, արիւնի զաւակներ, արեան որդիներ որոնք քշուած տարուած են և իրենց հայրենիքէն, հեռացա՛ծ իրենց բնակարաններէն, տարագրուա՛ծ, աքսորուա՛ծ օտար երկիրներ, պանդխտի դառն բաժակը իրենց պակին վրայ որու մէն մի կաթը ապի ու լեղի է...

Գիտէ՞ք Թումանեանի ձեռքէն առնուած ու Էգնաեանին տրուած որբերու կացութիւնը, է՛, տեսէ՛ք, ես կը կարծեմ որ դուք ալ ինձի հետ եթէ Թումանեանին խաչագող անունով կնքէք, Էգնաեանին պիտի անուանէք Որբեր չահագործող։ —Դահիւղ ու զուռնան չէր բաւեր թմբկելու և գոչանելու այն խոսքումը որ Էգնաեանը ըրած էր որբերը որդեգրելով, —որ արձանացրուած էր նաեւ Ֆրանսական մէկ ատեանին մէջ՝ Վոտիշապուհ քահանայի վկայութեամբ, — այդ խոսքումն էր որբերու ուսումն և կրթութիւնը ապահովել և յետոյ անոնց ոմանց արհեստ, ոմանց գիտութիւն սորվեցնելով մարդ ընել, մարդ ընել՝ անշուշտ պէտք է ըմբռնել՝ օգտակար անձնաւորութիւններ մարդկութեան՝ ընդհանրապէս, և իրենց ազգին ու հայրենեաց՝ մասնաւորապէս։

Աչքի առաջ ունեցէք որ Էգնաեան ըսուած մարդը, կամ եթէ կ'ուզէք ոսկէ-հորթը, և կամ աւելի ճիշտ, ադամանդի-մասկոյտը, որ իւրացուցած է իր մէջ ադամանդի փայլփլունութիւններն ու կնճռ, խարող ճառագայթները. այդ միեւնոյն միջոցով, այսինքն որբեր չահագործելով հանչերձ որբերու բարերար ըլլալու տիտղոսն ստանալ փորձած է ասկէ 4-5 տարի առաջ և խարանուած Պոլսոյ Բիւզանդիոն-էն։

Էգնաեան, իրեն յատուկ մեկ ճարպիկութեամբ, իրեն սարակարգեալներուն միջոցաւ, խաչագող թումանեանէն որբերը խլելով և անոնց բիւր կեղծ ու պատիր խոստումներ ընելէն յետոյ, զանոնք կառաջնորդէ, չորամիս յետոյ, ուղղակի իրեն գործարանը, —այսինքն այն տունը որ հայոց եկեղեցիին (չէ՛, մոռցայ Մանթաշեան եկեղեցիին — որովհետեւ այդ եկեղեցին դեռ հայոց չէ) նուիրելու մտքով է շինած (խոսքով... Էգնաեանը ազգի քթին ալ կը խնդալ կամ կուզէ խնդալ!...) և որ իրեն սեփականութիւնն է սակայն այսօր, —կ'առաջնորդէ. հոս աղջիկը պէտք էր քանանային վեցերորդ յարկի մէկ սենեակը որու օդը աննկարագրելի է(?) և ուր մնալով պէտք է սովրէին տիզերական ուսում ու կրթութիւնը(?) և արհեստն ու գիտութիւնը։ Առաջին ամիսներուն, տղոց վերակացուն կը նշանակուի Հարենց անուն մէկը, որ իր ազնուութեամբ տղոց փիճակը ատենուան մը համար բարեբաստիկ կը կացուցանէ, անոնցմէ փոքրերը ֆրանսական դպրոց մը ուղարկելով և մեծերուն միայն օրական 4 ժամ գործարանին մէջ աշխատել որոշելով։ Միւս ժամերուն տղոց միջոց կուենան ինքնաշխատութեամբ պարապելու. Պ. Հարենց կը յանդի Պ. Բասմաջեանը ամսական 40 ֆրանքով (ինչ մեծ ամսական ուսուցչի մը համար. ի՛նչ վեհանձն է էրկեան աղան...) ուսուցիչ կարգել տալով, չարաթը երկու-երեք իրիկուն դաստալու պայմանով։

Դժբաղդաբար որբերու այդ «երջանիկ» կացութիւնը երկար չտեւեր. Հարենցը կը մեկնի և որբերը կ'իյնան մանուկ և Մոզեան ըսուած չորքոտանի «երկրորդութեան» ձեռք, ապոց գործարանի մէջ աշխատելու ժամերը կը չատանան և ուսմամբ պարապելու ժամերը կը նուազին. գործարանին

ԲԱՆՏՈՒՄՆ Է ՄԵՌԵԼ

—)o(—

Արեգակը թեքուել էր թէպի արեւմուտք։ Պարսկաստանի, զուտ Թուրքաբնակ, մի փոքրիկ գիւղաքաղաքում, ընդարձակ բակի տերեւախիտ թթենիների ստւերումնստած էր տեղական քրիստոնեաների գաւառական դատաւորը։ Նա թիկն էր տուել փափուկ մութաքաներին եւ ծխում էր կալիան։ Նրա մօտ, ձեռները փորի վրայ միացրած, կանգնել նել էր մի ստորնակարգ պաշտօնեայ։

—Այն հայը երէ՞կ էլ ոչինչ չը խոստովանեց, հարցրեց նրան դատաւորը։

— Ձեր բոլոր հրամանները ամենայն խստութեամբ գործադրեցինք, բայց դարձեալ ոչինչ դուրս չեկաւ։

—Դուրս բերէք նրան այստեղ։

Այդ միեւնոյն բանտի մէջ էին գտնուում դատաւորի դիւանատունը, բանտը՝ բնակարան եւ ամէն ինչ։ Պաշտօնեան շտապով հեռացաւ. քիչ անցած, երկու հոգով թեւերի տակ նեցուկ եղած, առաջ բերեցին մի երիտասարդ բանտարկեալի։ Նա հազիւ հազ էր ոտքի վրայ կանգնում, աչքերի փայլը մարած էր եւ դէմքի վրայ նկատել էին ծանր տանջանքների հետքեր։ Դատաւորը դիմեց նրան.

—Եթէ դարձեալ կը յամառես եւ ոչինչ չես խոստովանի. ես կը հրամայեմ, որ քեզ չիկացած շամփուրներով դաղեն։

Մի հիւանդոտ ժպիտ ծռմռեց բանտարկեալի շրթունքները եւ նա հազիւ լսելի ձայնով արտասանեց.

—Ա՛յդ էլ իզուր կանցնի. ես ոչինչ չեմ կարող ասել, որովհետեւ ոչինչ չգիտեմ։

—Բեզ ազատ կը թողնեմ, եթէ կը խոստովանես։

Երիտասարդը մնաց անտարբեր։

—Ցամառում ես, հա՞, գոռաց դատաւորը, ասացի, որ մարմինդ կը դաղեմ, դէհ, ասա՝ չուտ...

—Արէք, ինչ որ կամենում էք, չչնչաց երիտասարդը, օրորուեց կանգնած տեղում եւ թեքուեց մի կողմ, կողքին կանգնածները պահեցին նը րան։

—Պառկեցրէք դրան եւ բերէք շամփուրները։

Նրան պառկեցրին քամակի վրայ հէնց իր կանգնած տեղում։ Իսկոյն քուրայի մէջ դրեցին մի քանի երկաթեայ շամփուրներ, որոնք շուտով կարմիր կրակի տեսք ստացան։

—Սկսեցէք, հրամայեց դատաւորը։

Դահիճը վերցրեց չիկացած շամփուրներից մէկը եւ քսեց պարկած երեւասարդի մերկ կրծքին. բարձրացաւ խկոյն մի փոքրիկ ճենճերահոտ. երիտասարդը ցնցուեց. դէմքի մկանունքները ցաւագինօրէն կծկուեցին. վերին շրթունքը ծռուեց դէպի վերը եւ անշարժացաւ։ Դահիճը բարձրացրեց շամփուրը. մի երկար, սեւ շերտ, ուղղահայեաց դիրքով ձգուած էր բանտարկեալի կրծքի վրայ։

—Հը, է՞ինչպէս է. դարձեա՞լ ոչինչ չես ասի։

Նա լուռ էր եւ անշարժ. միայն կուրծքը ուժգնութեամբ ցածր եւ բարձր էր լինում։

—Կրկնեցէ՛ք եւ թող խելքի գայ։

Դահիճը երկրորդ շամփուրը քսեց նրա աջ կողքին։ Երիտասարդը գալարուեց. շուռ եկաւ, մի թոյլ ճիչ արձակեց եւ մնաց։

—Բաւական է. կապեցէք վէրքերը եւ տարէք բանտ։

———

Այդ օրը մթնեց։ Դիշերն անցաւ. լուսացաւ հետեւեալ օրը։ Արեգակը բարձրացաւ, թեքուեց արեւմուտք եւ արագ-արագ դիմում էր դէպի մայր-մուտը։ Դիւղաքաղաքի մեծ ճանապարհի վրայ չորս թուրքեր ուսերի վրայ դրած՝ տանում էին երկու ձեւ փայտերից կազմած մի պատգարակ։ Նրա վրա օրօրուում էր երիտասարդ բանտարկեալը՝ ծածկած փալասի կտորով։ Բեռնակիրներին ուղեկցում էր մի թուրք պաշտօնեայ։ Նրանք հասան ճանապարհը խոտորնակի կարող մեծ առուի ափերին ընկած ուռենիների խիտ շարքերին, շեղուեցին ճանապարհից եւ անյայտացան ուռենիների խորքում։ Բեռնակիրները ցած թողին պատգարակը։ կռացան նայեցին նրա վրայ։ Պառկածը. մահուան մօտ էր եւ դեռ շնչում էր։

—Շունը դեռ կենդանի է։

—Մեռցրէք անհաւատին։

Մէկը վերցրեց առուի ափից մի փխրուն հողակոշտ եւ ուժգնութեամբ ցած թողեց մեռնողի դէմքին. նա չը շարժուեց. միայն շրթունքները անզգայօրէն դողացին։

—Շուտ արէք, վերջացրէք։ օրը մթնում է։

Մի քանի հողակոշտեր միանց յետեւից թափուեցին անշարժացած երիտասարդի դէմքին. նա դեռ շնչում էր։ մէկը բռնեց նրա կոկորդը եւ

մէջ 4 ժամ աշխատելուն կը յաջորդէ 6 ժամ, յետոյ 8 ժամ, յետոյ 9–ը ժամ, յետոյ, վերջապէս 10 ու կէս ժամ. տղոց սնունդի կարգը կը խաղտի, գէշ մսեղէն, գէշ ուտելիք կը գնուին, տղայք կը բողոքեն էգնաեանին իրենց ուսուցիչ Պ. Բասմաջեանի մէջտեղը, բայց Պ. Պ. Մանուկ Մոզեան չորքոտանի-երկրորդութիւնը կը յաջողի դուրս հանել տալ Բասմաջեանը, էգնաեանի յոտ զայն բամբասելով թէ Պ. Բասմաջեանը տղոց ապզատիրութիւն դաս կուտայ եղեր (ե՛ս, Բասմաջեանի ամենամեծ թշնամին, կամ բառախաղի չգալու համար, ամենանգութ և անդարձ թշնամին, կը նորհաւորեմ Բասմաջեանը իր այս սուրբ յանցանքին (.°) համար)

Որբերը կ'ապրին իրենց եղած խոստումներուն հակառակ, այս անիրաւ հեռուանքը, կը բողոքեն քահանային և էգնաեանին՝ Մանուկ Մոզեան չորքոտանի-երկրորդութեան դէմ իրենց ձայնը անլսելի կ'ելլայ։

Փակագծի մէջ ըսեմ որ որբերու Թումանեան պատուելիի ձեռքէն առնուելու և էգնաեանին տրուելու ատենները, որբերու ազգականները՝ հեռաւոր թէ մերձաւոր, իրենց գրժբաղդ տղոց ատանդական կացութիւնը իմանալով կը գրեն իրենց հայրենակից Պ. Ա. Ղումբուեանցին՝ խնդրելով որ հետաքրքրուի որբերու կացութիւնով և իրենց իմացնէ՝ իրենք տրամադիր կ'ելլան օտար երկիրներու փողոցները հաց մուրալ և օգնութեան հասնիլ իրենց մարտիրոս ազգականներու որբացած տղոց։ Պ. Ղումբուեանց հեռուէն ու մօտէն երկար ատեն կը զննէ տղոց կացութիւնը և կ'ապահովէ անոնց ազգականները։

Պ. Բասմաջեանի ուղարկումի միջոցին Մանուկ-Մոզեան չորքոտանի երկրորդութիւնը խօսք կը տարածէ թէ տղոց կացութիւնը շատ լաւ է եւ թէ յանցանքը Բասմաջեանին է, թէ Բասմաջեանն է դրդողը։ Այդ ատեններ իրեն ցանած որոմի արդիւնքը քաղելու համար Փարիզ կուգայ Տիգրան Էլմասեան անուն երկայնահասակ կարապապարանոց պարոն մը որ, իր ոգորմելի կացութեան մէջ, (իր ցած որոմը անարդիւնք կելլայ իրեն համար) հանդիպելով պ. Ղումբուեանցին անոր գիտութեան կապուելնի եւ քծնելով կը խնամուի անկ երկու ամիս։ Պ. Ղումբուեանց անծանօթ իրեն ներկայացող պարոնի բարոյականին, անոր բարիք մը ընելու նպատակով եւ որբերու հետ ծանէն յարաբերութիւն կրնալ ունենալու յոյսով պ. Զօպանեանի, պ. Տէր Միքաէլեանի եւ Տ. Վռամշապուհին կը դիմէ խնդրելով որ միջնորդեն պ. էգնաեանի քով որպէս զի Էլմասեանը ուսուցիչ նշանակուի որբերուն։

Պ. Ղումբուեանց իր դիմումներուն մէջ կը յաջողի եւ կը յուսայ մեծ ծառայութիւն մը մատուցած ըլլալ որբերուն։ Այն մտքով թէ Էլմասեան, տառապեալ մը պիտի կրնար նրբերեալ օգտակար ըլլալ եւ յարկ եղած միջոցին որբերուն ձայնակցիլ։ Բայց, Աստուա՛ծ իմ ինչ յուսախաբութիւն, պ. Էլմասեանի հոն մտնելէն շաբաթ մը լեռոյ որբերու կացութիւնը աւելի անտանելի կ'ելլայ, պ. Էլմասեան, որ կարծեմ «Շարժումի» ընթերցողներուն ծանօթ է,— իր առաջին օրէն իսկ չը գիտեմ ինչ հին կապեր գտնելով մանուկ Մանուկ, Մոզեան-չորքոտանի-երկրորդութեան հետ կը միանայ եւ կը հաստատեն Էլմասեան-Մանուկ-Մոզեան վեցնուանի երորդութիւն մը. դիւային ժողով։ Այդ դիւային երրորդութիւնը նախ, Էլմասեանի միջոցաւ, հազարումէկ գիշերներու Մօլա-հաճիբաբաներու, հասաններու եւ հայդարներու հեքեաթները պատմելով որբերուն՝ իր դաս՝ կուզէ անոնց մէջ խեղդել ամէն ազնիւ գաղափար եւ հոլ ասրուկներ դարձնել զանոնք, երբ այդ չի յաջողիր Էլմասեան արարածը, որ հապար ումէկ անուն ունի եւ որոնցմէ ամէն մէկը այնքան ճիշդ ըլլալով իրեն չգիտեմ օրուն առաջնութիւն տալ, կըսկսի տղոց ծեծել, «լիր՛ը, սրիկա՛յ, ասոր ցեղէ՛ սերած» եւն եւն իրեն վայել հայհոյանքներով անպատուել ու Մանուկ-Մոզեանի հետ զանոնք բանտարկել խտրերկրեայ տներ, եւն եւն, բայց այս բոլոր անցքերը լսելեան կը դիտէ պ. Ղումբուեանց, կը հարցաքննէ որբերը, կիմանայ այն բոլոր լրբութիւնները որ կը գտնեն այդ որբերու շուրջը որոնք այժմ գրել յարկ չենք տեսնար,—կը հասկնայ թէ ի՞նչ ատոր աչարած է իր պաշտպանած, խնամած եւ որբերուն իրր ուսուցիչ ղրկած Էլմասեանը, թէ որքա՞ն վիճասակար է այդ պարոնը մարդկային ընկերութեան համար, թէ այդ պարոնը իր մէկ նամակով քանդած ըլլալով քսաներեք տարիէ ի վեր գոյութիւն ունեցող ամուսնութիւն մը եւ քայքայած ընտանիք մը ոչ միայն ուսուցիչ ըլլալու անկարող այլ մարդկային ընկերութենէն արտաքսուելու արժանի մէկն է։ Տեսնելով այս բոլորը, նկատելով որ այդ դիւային երրորդութիւնը նոյնիսկ կը պատռէ էգնաեանի եւ տիկին էգնաեանի իրենց տուած հրանգը՝ որովհետեւ ուտեստին վերաբերեալ, պ. Ղումբուեանց իր մեղադրութիւնը քաւելու համար, կը ներկայանայ անձնապէս պ. էգնաեանին եւ կը բացատրէ, ժամուկէս տեսակցութեամբ, որբերու կացութիւնը եւ Էլմասեան-Մանուկ-Մոզեան հրէշներու ընթացքը։ Էգնաեան Մանուկ ըսուած (իր անուան արժանի ազանց ան–ի) պարոնի խօսքին անսալով չուզեր լսել պ. Ղումբուեանցի շատ հաւատութեամբ բրած դիտողութիւնները եւ հօխտոդ կը մնայ գրբութիւններուն ու գողութիւններուն առջեւ իր աչք գոցելու սովորութեան մէջ։ պ. Ղումբուեանց կը սպառնայ խնդիրը ընդհանուր դատախազին տալ՝ հակառակ պարագային՝ եւ այսպէս կը թողու էգնաեանը։

(Շարունակելի)

Անիկոյտներ կամ շուկայի հերականութիւն

Զանազան ազգերու բարքերէն առնուած հրանգիչ և ծիծաղաշարժ մի գրքոյկ է, որ պիտի բաղկանայ 7 ֆորմայէ և տպագրուելէ յետոյ պիտի ծախուի 1.50 ֆրանքի, իսկ ով որ կանխաւ բաժանորդագրուի, կը վճարէ մրցոյն 1 ֆրանք։

Կարելի է բաժանորդագրուիլ Վառնայի մէջ՝ լրագրավաճառ Պ. Համբարձումի, և Պ. Գիզամի սրճարանը։

Ռուսչուք՝ Պ. Գերոբէ Զաքարեանի։

Գոնսթանցա՝ Պ. Ճիվան Ալիքեանի։

Սեւաստիա՝ Պ. Նշան Ցէր-Կարապետեանի և Գահիրէ՝ Պ. Լեւոնդ Միրիճանեանի միջոցով։

Գրքի վերջը կաւելցուի աէքվամներու մի բաժին, ուր տպագրուած կը տեսնեն իրենց դրածը, տեղը և հասցէն. վաճառականներ, յանձնակատարներ, արհեստաւորներ, գործակալներ եւլն, վճարելով մեծատառ 1 երեսի համար 5՝ իսկ կէս երեսի համար 3 ֆրանք։ Գիրքը հրատարակուելու օրինակներ տպագրելով Գուլկարիոյ, Ռոստոնի, Ռուսչուքի, Գահիրէի և Սմիրնայի քաղաքներուն կրմէ։

Հեղինակին հասցէն՝

Մ. Պ. Հայկազեան

Սիրէ Վառնա թիւ 32

Փոստա (Գուլկարիա)

ՆՈՐԱՍԻՊԻՆ ՄԸ

Նախկին ոգեշրգուարուհատագէտ Պ. Կարապետ Թալֆեան հիմայ գիտակցութեամբ կզբաղի, ստացանք յայտարարութիւն մը որու բովանդակութիւնը պարզ ու իմբռնելի է. «Առողջապահութիւն» դիտակցի բժշկա-

Գիւղացիները աւելի ուշադրութեամբ զննեցին անծանօթ դիակը. նրա այլակերպուած դէմքի վրայ ծոխրով շաղախուած էին նորաբոյս ընչացքն ու միրուքը. աչքերի եւ բերանի մէջ մնացել էին հողի հետքեր. նրանց չը կարողացան իմանալ, թէ ինչի նշաններ էին դրանք։ Վերջերին դիակը, տարան եկեղեցու յետեւը՝ թաղուած տեղում. մերկացրին եւ դրին տախտակի վրայ որտեղ մեռելներ էին լուանում։—Է՛յ վա՛խ, սեւ հագնէ քո մէրը, հառաչեց մեռել լուացող կինը. նա սարսռալով տեսաւ դաղուած տեղերը եւ լաց եղաւ... Լուացին նրան, հագցրին չատ ապրած կարուած պատանը դրին նաւի մէջ եւ տարան եկեղեցի։ Աչակողմեան պատի տակ, ճիշդ այն տեղում՝ որից վեր պատի վրայ նըկարուած Ս. Գէորգ զորավարը իր նիզակը խրել է մի մեծ վիշապի երեսը, դրին նաշը. դուրս թափեցին բոլորը. ժամերը քաշեց եկեղեցու երկաթեայ ծանր դուռը, զրնգզրնգաց, կողպեց, դուրս թռչեց բազալին եւ հեռացաւ։ Ներսում խաւարի եւ խեղդող լռութեան մէջ մենակ մնաց անծանօթ երիտասարդի դիակը։

(Շարունակելի)

հուպ տուեց. մեռնողը թեթեւակի ցնցուեց. մի անլսելի խռխռոց արձակեց եւ անշնչացաւ։ Թուրքերը պոկեցին նրա հագուստից մի ծուէն, սրբեցին երեսի վրայ մնացած փոշին, ծածկեցին փալաքի կտորով. վերջերին պատգարակը եւ առաջացան դէպի ճանապարհը։

Օրը երեկոյանում էր. Հ... գիւղի հանդերում աշխատողները մէկ-մէկ վերադառնում էին գիւղ. հնուում պրնձող նախիրը եւ ոչխարի հոտերն ի դուրս ելնելը շուտ տուած, կամաց-կամաց մթնեցնում էին։ Մեծ ճանապարհի վրայ քայլող բեռնակիրները եւ թուրք պաշտօնեան նոյնպէս դիմում էին դէպի Հ... գիւղ։ Նրանք չտպ քայլերով հասան գիւղին եւ դիմեցին ուղիղ եկեղեցու բակը ուր եւ ցած դրեցին պատգարակը. Շուտով այնտեղ եկաւ գիւղի ոէսը (տանուտէրը), մի քանի ուրիշ գիւղացիների հետ։

—Սա այսօր բանտումն է մեռել. դատաւորը հրամայեց դիակը այստեղ բերել, որպէսզի դուք թաղէք. որովհետեւ ձերանցից է-հայ է. յայտնեց թուրք պաշտօնեան, երբ նրանք բոլորովին մօտեցել էին։

Գիւղացիները մտամոլոր եւ չուաւրած, նախ զննեցին դիակը. ոչ մէկը չը ճանաչեց նրան. նա մի անյայտ մարդ էր։

—Ո՞վ է այս մարդը. հարցրեց տանուտէրը։

—Ինձ յայտնի չէ դրա ով լինելը եւ դատաւորն էլ այդ մասին ոչինչ չասաց. միայն այսքանը ես կարող եմ ասել իմ կողմից, որ դա փախածներից պէտք է լինի, որը բռնուած է իբրեւ մի անյայտ տեղից կամ ճանապարհների վրայից։

—Ինչքա՞ն ժամանակ էր բանտում եւ ինչո՞ւ մեռաւ։

—Կարծեմ սա հէնց հիւանդ դրութեան մէջ է բանտուել եւ չորս, թէ երեք օր մնաց բանտում։

Գիւղացիները հնացել էին վարանոտ դրութեան մէջ. զգում էին, որ դա մի փորձանք է բերելու իրանց գլխին, բայց չգիտէին ինչ անել, ինչպէս վարուել։ Մինչեւ այդ եկեղեցու բակը հաւաքուել էին մեծ բազմութեամբ մարդիկ ու վախեցած, յուզուած եւ հետաքրքրութեամբ դիտում էին. մի քանի մանուկներ մինչեւ անգամ մօտեցել եւ չշոշափում էին դիակը։

—Ուրիշ հրաման չունե՞ք. հարցրեց թուրք պաշտօնեան.

—Ոչ, պատասխանեց տանուտէրը մտքենայաքար։

Թուրքերը ճեղքեցին բազմութիւնը եւ լուռ. իրար քամակ ընկած, շտապով հեռացան։

—Սա անպատճառ մեր գլխին մի փորձանք կը բերէ. ասաց գիւղացի ներից մէկը։

—Դատաւորը դիտաւորեալ է այս դիակը մեզ մօտ պղարկել, որպէս զի պատրուակ ունենայ նորից տուգանք վերցնելու գիւղից, ասաց մի ուրիշը։

—Մենք չը պէտք է ընդունէինք անծանօթ դիակը, խօսեց հանդիսաւոր կերպով մի ծերունի. ասէինք սրան չենք ճանաչում, տէրութիւն չենք կարող անել եւ էլի իրանց ձեռքով յետ ուղարկէինք. որովհետեւ վաղը դատաւորը ծէր կը կանչէ, լու ծեծել կը տայ ու տուգանք էլ կառնէ. ասելով այդ մեռածը ձեր մարդկանցից էր, դուք նրան ճանաչում էիք...

—Իսէր Աստուծոյ, ի սէր Աստուծոյ, էլ մեզ վրայ հալ չը մնաց, էլ ոչ մի կերպ չենք կարող դիմանալ. տնաքանդ եղանք տուգանք տալով, ձայնեցին հաւաքուած բազմութեան մէջ այս ու այն կողմից։

—Ոչինչ չի լինի, ասաց տանուտէրը եւ յորդորեց նրանց ցրուել։

կան ու փորձն 1.— Հոգեբանական երամսեայ հանդէսի նպատակը պիտի լինի, տգիտութեան դէմ կռուիլ, ու մատնանիշ անել այն անհատական չարիքները, որոնք տգիտութենէն յառաջ կը գան։ 2.—Զանազան հիւանդութիւնների մէջ ժառանգականութեան ներշնչակութիւնը ու ազդեցութիւնը բացատրել ու լուսաբանել։ 3.— Զանազան հիւանդութիւնների սկզբնապատճառները մատնանիշ ընել ու պարզել եւայլն ...։

Մի խօսքով, երամսեայ հանդէսիս նպատակն է մատնանշել այն բոլոր առողջապահական կանոնները ու բժշկական միջոցները, որոնցմով մարդ արարածը կարող է իր մարմինը առողջ ու իր հոգին (ուղեղը) մաքուր ու անվտանգ պահել ...։

Մենք կը կարծենք որ Գ. Կարապետ Գալֆաեանը իր մեծ վարպետներուն օրինակին կը հետեւի, Բարիզի մէջ մեծանուն ոկբերգուն Գ. Միւնէսիլին արթիստ ըլլալէ առաջ բժիշկ էր, բարձրագոյն կրթութիւն ստացած էր, նմանապէս անոր եղբայրը Բոլ Միւնէն, որը մեծ արթիստ և բժիշկ մըն է։

Գ. Կարապետ Գալֆաեանի արտայայտած գիտական մտածումներէն պարզօրէն կը հետեւցնենք որ ինքը գիտական զարգացում ալ ստացած է, և մի քանի տարի հետեւած է Բարիզի գիտական դասախօսութիւններուն։

Իր հակաալգոլ ընկերութեան անդամ ըլլալը, ու իր լուրջ բնաւորութիւն ալ մեզի ենթադրել կ'ուտայ որ իր խոստացածներուն տէրն է։

Աւելի ճիշտ եզրակացութիւն մը ընելու համար պիտի սպասենք իր երամսեայ հանդէսի հրատարակութեանը։

Ինչ որ ալ ըլլայ մեր սիրելի արուեստագէտին յաջողութիւն փափաքողներէն ենք։

Զարեհ Գարրիէլեան

Հոկտ. 25 1904

Աղեքսանտրիա

---

14 Հոկտ. 1904 Բարիզ

Ֆ...

Յառաջիկայ Դեկտեմբեր 21ին լոյս կը տեսնէ «Կռունկ» անունով գեղարուեստական (երաժշտութիւն, ճարտարապետութիւն, եւայլն) եռամսեայ հանդիսի մը առաջին թիւը։

«Կռունկ»ին նպատակն է՝

1.— Հայ արուեստը Հայուն ճանչցնել։

2.— Եւրոպական արուեստը Հայուն ճանչցնել։

3.— Հայ արուեստը Եւրոպային ճանչցնել։

«Կռունկ»ը, հետեւաբար, երկու լեզու պիտի խօսի՝ Հայերէն ու Ֆրանսերէն։

«Կռունկ»ը Ֆրանսացի ականաւոր անձնաւորութեանց հովանաւորութիւնը կը վայելէ։

«Կռունկ»ը հայ և օտար աշխատակիցներ կ'ունենայ։

«Կռունկ»ին կանոնաւոր հրատարակումն ապահովուած է Ֆրանսացի բարեկամի մը կողմէն։

«Կռունկ»ը, սակայն, կը հրաւիրէ նաեւ իրմէնները —Հայերը— որ՝ մանաւանդ իրենց համար օգտակար ձեռնարկի մը թէ՛ բարոյական և թէ՛ նիւթական հոգերը՝ արդարեւ մեզի համակրող բայց վերջապէս օտար բարեկամներու վրայ միայն չ'ծանրանան։

«Կռունկ»ին տարեկան բաժանորդագրինն է՝

Եւրոպայի համար	10	ֆրանք
Ամերիկայի „	2	տոլար
Ռուսիոյ „	4	ռուբլի
Յունկաստանի „	50	ղրշ։

«Կռունկ»ը՝ գեղարուեստասէր բայց նիւթապէս համեստ գիրք ունեցող ազգայիններու՝ կէս գնով և նոյնիսկ ձրի պիտի ղրկուի։

Հասցէ՝

Գ. Բոգֆ-Գալֆաեան

Տիրէֆքոր տիւ «Կռունկ»

Ըվիւ Արթիս Արմենիեն

159, Պուլվար Մոնթպարնաս

ԲԱՐԻԶ

ՆԱՄԱԿ ԹԻՖԼԻԶԻՑ

—)o(—

Թիֆլիզ, 10 հոկտ. 1904

Անցեալ կիրակի երեկոյեան էջմիածնից Թիֆլիս ժամանեց պետուտունից Վրաստանի և Իմերիթի թեմի առաջնորդ նշանակուած Գարեգին եպիսկոպոս Սաթունեանը։ Այս կիրակի, վանքի մայր տաճարում ժողովրդին կարդացուեց այդ առթիւ տրուած հայրապետական կոնդակը և ինքը-առաջնորդը խօսեց մի համառօտ քարոզ։ Իր քարոզի մէջ նոր նշանակուած առաջնորդը լաւ էր. նա ուրախալի ողջոյններ էր բերել մայր աթոռ սուրբ Էջմիածնից և «Սիմոն ծերունու պէս պայծառ օրեայ արշալոյսին սպասող ծերունազարդ հայրապետ Խրիմեան Հայրիկից»։ Նայորգորում էր հայ ընտանիքին, հայ մարդուն՝ պինդ պահել, հոգու խորքում փաթաթել ազգային լեզուն, սովորութիւնները, եկեղեցին։ Հին ընտանիքի պարկեշտութիւնն ու ազգային ոգին պէտք է ունենայ այժմեան հայ ընտանիքը։ Ազգին նեցուկներ եղած հին հայ մեծ մարդկանց օրինակին պէտք է հետեւէ այժմեան հայ մարդը։ Սրբազանը յանդիմանեց հայ ընտանիքներում տիրող անմիտ շռայլութիւնն ու մանաւանդ օտարասիրութիւնը։ Նա ասաց, որ խօսելու դեռ շատ առիթներ կունենանք։

Լաւ էր Սրբազանն իր քարոզի մէջ. բայց հասարակութեան՝ կարծիքն անպատշաճ է Սաթունեան սրբազանի համար։ Հէնց այն հանգամանքը, որ նրան ջոկել և նշանակել է պետութիւնը, մեծ փաստ է համարւում ժողովրդի կողմից, որ նա ոչ մի ուրախալի բան չի բերում իր հօտի համար։ Սակայն սպասենք տեսնելու, թէ ապագան ինչ ցոյց կը տայ։

Ֆալամ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամսոյս 18ին Սոֆիա եկաւ Սերպիոյ թագաւոր Բեթր առաջինը։ Պուլկար մամուլը ամբողջովին և ժողովուրդը մեծ ոգեւորութեամբ ընդունեցին իրենց ցեղակից և դաւանակից ժողովրդի թագաւորը։

Երկու ցեղերուն վեհապետները շատ զգածուած բաժակաճառեր փոխանակած են յայտարարելով և շեշտելով որ իրենց ժողովրդներուն ընդհանուր շահերը կը պահանջեն բարեկամ ըլլալ և որոշ խնդիրներու մէջ համերաշխ գործել։

Զարմանալին և Աւստրիան ու Թուրքիան բարկացնողը այն կէտն է, որ Բէթր թագաւորը իր առաջին այցելութիւնը Պուլկարիոյ կուտայ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍ—ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Պատերազմի դաշտէն կարեւոր լուրեր չեն հասնիր. տեսակ մը լռութիւն կը տիրէ. թերեւս աւելի խոշոր վտանգներ սպառնացող։

— Բօրթ Արթուրի մասին կը սեն որ կրակի մէջ է, ու ճապոնացիները կրկին երկու ամրութիւններ գրաւած են։ Իսկ Շթոսէլ Ցարին հեռագրած է որ Բ. Արթուրը իր գերեզմանը պիտի ըլլայ։

— Բալթիկեան նաւատորմիղին հետ պատահած միջադէպը. անգլիացի ձկնորսներու ոչնչացումը, յանձնուած է միջազգային յանձնաժողովի քննութեան որ հաւաքուած է Սպանական Վիկօ քաղաքին մէջ։

— Պուլկարիոյ մէջ յայտնի կարուլպարս ռուս զօրավարը Մանջուրիոյ զօրաբանակներէն միոյն հրամանատար կարգուած է։

— Ռուս պաշտօնեայի մը տրուած տեղեկութիւններուն համաձայն ճապոնացի ամիրալ Թոգոմօթօ հարիւր էլէքտրագէտ սպաներ զատելով կը ծրագրէ ռուսական նաւերու վրայ յարձակիլ։ Շատ մը ճապոնացիներ ղրկուած են Կրիսթիանա, Յանիմարքա, Անգլիա և Հնդկաստան։ Անոնք իրենց տրամադրութեան տակ ունին դրամական մեծ միջոցներ, նաւեր գնելու համար։ 60 ճապոնացիներ մեկներ են Նորվէկիա։

—Մուկտենէ կը հեռագրեն թէ ճապոնացիները Շախոն անցեր են և ամրակոծում տեղի ունեցեր է։

—Բուրբաթկիսի պաշտօնապէս կը հաղորդէ որ ճապոնացիները նոր ուժեր կը սուանան և վճռական ճակատամարտը մօտալուտ է։

Ա. Երիկեան տմսագիր

Շնորհակալութեամբ ստացանք Բոսպօնի մէջ նոր հրատարակուող և անգլիերէն լեզուաւ «Արմենիա» ամսագիրը, որ կը վայելէ նշանաւոր հայասէր ամերիկացիներու հովանաւորութիւնը։

Ամսագրին նպատակն է հայերը ծանօթացնել անգլիախօս ազգերուն հետ։

Առաջին թիւը լոյս տեսած է հոկտեմբերի մէջ. գինն է 1 տոլար. հասցէն

2285 Թ. Օ. Բօքս.

Բոսպօն Մասս Իւ. Ս. Ա.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԷԶԸ

——

Շնորհակալութեամբ ընդունեցինք Հայ Ուսանողական Միութեան հրատարակած Հայաստանի Քարտէզը, չքեղ կազմով։

Քարտէզի գինն է մէկ ֆրանկ Ռուսաստանում կէս բուպլի։ Ամեն հայ պարտաւոր է ունենալ այս սիրուն և աժան ու բաւական բնամքով պատրաստուած քարտէզը։

Հասցէ՝

Իւնիօն տէ Էտիւեան Արմենիեն

Տ'Կորոպ

Ռիւ ։ը լեֆոյ տը Շիմի

ԺԸՆԷՎ

ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Տարին վերջանալու մօտ է և մեր բաժանորդներէն շատերը դեռ իրենց բաժնեգիները չեն վճարած։

Կան և այնպիսիները որոնք երկու տարեկան պարտք ունին։ Ինչպէս կերեւի այդ մարդիկը կը կարծեն թէ մենք թուղթը տէմքրը ձրի կառնենք։ գրաշարները ու տպարաններն ալ ձրի կաշխատին և մենք հաց չենք ուտեր։ այլ օդով կապրինք։

Քիչ մը ազնիւ ըլլալու են մեր չը վճարող բաժանորդները, մանաւանդ անոր համար որ մենք երբէք առանց բաժանորդներու պահանջին թերթ չենք ղրկեր մարդու։ Պահանջողը և իր պարտականութիւնը կատարելու տարրական զգացումէն զուրկ չը պիտի ըլլայ։

Խմբագրութիւն

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна